Թերեզա
ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ»
հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

https://orcid.org/0000-0001-8888-045X

ՀԱՎԱՍԱՐՆԵՐԻ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

DOI: 10.52174/2579-2989_2022.3-52

Հիմնաբառեր. *ներառական հագուստ, քրաուդֆանդինգ, ինպակտ բիզնես, հաշմանդամություն, սահմանափակ կարողություններ, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, սոցիալական նորաձևություն*

Հագուստն ունի հոգեբանական մեծ ազդեցություն. այն հաղորդում է ինքնավստահություն, լուծում անձի սոցիալականացման խնդիրը: Ժամանակակից նորաձևության հիմնական ուղղություններից են հավասարությունը և հանդուրժողականությունը: Ներառական հագուստի իմաստն այն է, որ սահմանափակ կարողություններով մարդիկ իրենց զգան այնպես, ինչպես բոլորը: Ներառական հագուստն ինքնին վերականգնողական միջոցառումների բաղկացուցիչ է: Համընդհանուր դիզայնով ներառական հագուստի ստեղծումը կարևոր մարտահրավեր է ժամանակակից մարդու համար: Իսկ այդ նպատակի իրագործմանը, բացի պետությունից, կարող են նպաստել նաև քրաուդֆանդինգի հարթակները: Այժմ ժամանակն է զարգացնելու նորաձևություն նրանց համար, ում մասին ընդունված է լռել: Ներառական հագուստի արտադրությունը, նախևառաջ, մարդասիրական գործունեություն է, միջոց՝ օգնելու նրանց, ովքեր ունեն դրա կարիքը, հեշտացնելու վերջիններիս կյանքը և աջակցելու, որ զգան իրենց որպես այս հասարակության լիիրավ անդամ:

Արծարծվող խնդիրն ունի բազմաթիվ իրավական կարգավորումներ: 2006 թվականին ՄԱԿ-ն ընդունեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որով նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեքորեն ինտեգրում հասարակությանը[1]: Կոնվենցիային

[1] «Эти вещи были придуманы для людей с инвалидностью. Теперь ими пользуются все Что такое инклюзивный дизайн — и кто им занимается в России», 30 ноября 2019 ,Источник: Meduza, https://meduza.io/feature/2019/11/30/eti-veschi-byli-pridumany-dlya-lyudey-s-invalidnostyu-teper-imi-polzuyutsya-vse

միացել է նաև Հայաստանը: Սակայն, միայն պետությունները չեն, որ աշխատում են ներառական միջավայր ստեղծելու ուղղությամբ: Ամբողջ աշխարհում ընկերություններն օգտագործում են ներառական դիզայն՝ իրենց արտադրանքը տարբեր սպառողների համար մատչելի և գրավիչ դարձնելու համար: Այդ կարևոր ոլորտներից է նաև հագուստի արտադրությունը, որտեղ կիրառվում են ներառական դիզայնի սկզբունքները[2]:

Աշխարհում ավելի քան 1,8 միլիարդ մարդ հաշմանդամություն ունի, և վերջիններիս ընդհանուր ծախսերը կազմում են 13 տրիլիոն ԱՄՆ դոլար: Ելնելով առկա վիճակից՝ համաշխարհային փորձում սկսել են մեծ ուշադրություն դարձնել ներառական նորաձևության զարգացմանը: Ինչպես ցույց է տալիս Coherent Market Insights-ի հետազոտությունը, ներառական հագուստի համաշխարհային շուկան մինչև 2026 թվականը կկազմի մոտ 400 միլիարդ ԱՄՆ դոլար[3]: Օրինակ, ըստ Մարդահամարի բյուրոյի վերջին տվյալների, ԱՄՆ-ում մոտավորապես 85,3 միլիոն մարդ հաշմանդամ է, որն ԱՄՆ-ի բնակչության գրեթե 30%-ն է: Ամերիկյան գիտահետազոտական ինստիտուտներն այս խմբի եկամուտը գնահատում են տարեկան 490 միլիարդ ԱՄՆ դոլար[4]:

Նորաձևության ոլորտն աստիճանաբար շարժվում է դեպի հարմարավետ հագուստի և հաշմանդամություն ունեցող մարդկանց համար նորաձևության տարբերակների մշակում:

Ներառական հագուստը շատ դեպքերում առաջին հայացքից դժվար է տարբերել սովորականից: Դրա տարբերակիչ հատկանիշերն են մագնիսական կոճակները և կայծակաճարմանդները, որոնց առանձնահատկությունն ամրացումների մեջ է՝ հաշվարկված այնպես, որ պրոթեզով կամ մեկ ձեռքով հեշտ ամրացվեն: Այսպիսի հագուստը կարող է ունենալ նաև հատուկ կտրվածքներ՝ նախատեսված սարքերի, պոմպերի, գաստրոստոմիայի և պրոթեզների համար: Դրա որոշ տարրեր կարող են պատրաստված լինել դիմացկուն նյութերից[5]: Օրինակ՝ հաշմանդամի սայլակից օգտվողների հագուստը, սովորաբար, աղտոտվում է շապիկի թեզանիքի և տաբատի շրջանում, ուստի կարևոր է հաշվի առնել գործվածքի անջրանցիկ լինելը և հեշտությամբ մաքրվելու հատկությունը:

Ներառական հագուստի կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կան իրավիճակներ և հիվանդություններ, որոնք փոխվում են տվյալ անձի կյանքի որակը և, հետևապես, սովորական հագուստի կիրառությունը դառնում է խնդրահարույց: Օրինակ՝ ուղեղային կաթված ունեցող մարդկանց համար ճիշտ հագուստի մոդելավորումը լուրջ մարտահրավեր է ներառական հագուստի դիզայներների համար: Այս պարագայում պետք է մոդելավորել առավել քան տարբերվող հագուստ՝ պայմանավորված հնարավոր գնորդներին բնորոշ սուր սպազմոդիկ շարժումներով, որոնք վերջիններս չեն կարող կառավարել, ուստի կոստյումի որոշ դետալներ պետք է պատրաստված լինեն հատկապես դիմացկուն նյութերից, և որքան հնարավոր է՝ պետք է բացառվեն կոճակները, որոնք կրողի կողմից չեն կարող օգտագործվել[6]:

Նման առանձնահատկությունները սովորական հագուստ մոդելավորելիս հաշվի չեն առնվում:

Ներառական հագուստը լուծում է միանգամից երկու խնդիր. նախ՝ այն իր ֆունկցիոնալությամբ առավելագույն չափով օգնում է թեթևացնել սահմանափակ կարողությամբ պայմանավորված անհարմա-

[2] «Эти вещи были придуманы для людей с инвалидностью. Теперь ими пользуются все Что такое инклюзивный дизайн - и кто им занимается в России», 30 ноября 2019, Meduza, https://meduza.io/feature/2019/11/30/eti-veschi-byli-priduma-ny-dlya-lyudey-s-invalidnostyu-teper-imi-polzuyutsya-vse

[3] Inclusive Fashion – The New Frontier to Sustainable Fashion, https://thesustainablemag.com/lifestyle/inclusive-fashion-the-new-frontier-to-sustainable-fashion/

[4] «Почему мода должна быть инклюзивной?», 29.04.2022, Глеб Голицын, https://foxtime.ru/pochemu-moda-dolzhna-byt-inkljuzivnoj/

[5] Inclusive Fashion – The New Frontier to Sustainable Fashion, https://thesustainablemag.com/lifestyle/inclusive-fashion-the-new-frontier-to-sustainable-fashion/

[6] «Эти вещи были придуманы для людей с инвалидностью. Теперь ими пользуются все Что такое инклюзивный дизайн - и кто им занимается в России», 30 ноября 2019, Meduza, https://meduza.io/feature/2019/11/30/eti-veschi-byli-priduma-ny-dlya-lyudey-s-invalidnostyu-teper-imi-polzuyutsya-vse

ությունը, և երկրորդ՝ ունի հոգեբանական ազդեցություն՝ լուծելով հասարակությունից հետ չմնալու, սոցիալականացման խնդիր: Այն պետք է հարմար լինի տարբեր կարիքներ ունեցող մարդկանց համար և, այնուամենայնիվ, լինի հագուստ և ոչ թե հաշմանդամության համազգեստի նման մի բան[7]:

Ներառական հագուստի կարևորությունը կապված է նաև այն հանգամանքի հետ, որ շատ դեպքերում դա ուղղակի անհնար է փոխարինել սովորական հագուստով՝ զուտ ձևափոխություններ կատարելով: Օրինակ՝ մանկական ուղեղային կաթված ունեցող երեխան մեծանալով ունենում է ինքնուրույն հանվելու և հագնվելու խնդիրներ՝ պայմանավորված ֆիզիկական հմտությունների բացակայությամբ, ոտքերի, ձեռքերի սարքերի առկայությամբ, ինչին կարող է օգնել ներառական հագուստը:

Մեր երկրում դեռևս նման հագուստ չի արտադրվում: Տարածաշրջանում նման արտադրություն առկա է միայն Ռուսաստանում (օրինակ՝ Be Easy Kid, OrthoModa, Bezgraniz Couture-ը և համեմատաբար նոր՝ Nelka Adaptive և Limitless Fashion ապրանքանիշները)[8]:

Այսօր շուկայում քիչ ապրանքանիշներ կան, որոնք կարող են իրենց թույլ տալ արտադրել իրեր՝ հաշվի առնելով բոլոր հաճախորդների կարիքները: Ներառական հագուստ արտադրելը ինքնին դյուրին գործընթաց չէ, քանի որ պայմանավորված է բազմաթիվ հավելյալ ծախսերով:

Նախ՝ նման հագուստ արտադրելու որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել այն ներդրումները, որոնք անհրաժեշտ են հատուկ մոդելների մշակման, հումքի, ապրանքների առաջմղման և այլնի համար: Հատկապես փոքր կամ զանգվածային արտադրական հատվածի ներկայացուցիչները չեն կարող իրենց թույլ տալ զուգահեռ ունենալ հաշմանդամություն ունեցող անձանց հագուստի համար պատասխանատու բաժին և զբաղվել համապատասխան հագուստի արտադրությամբ: Դա անելու համար պետք է հաշվի առնել բազմաթիվ կատեգորիաների կարիքները և մեծացնել անձնակազմի թիվը: Այստեղ առաջ է գալիս նաև ֆոկուս խմբերի հետ պարբերաբար հարցումներ անցկացնելու խնդիրը, որը պակաս ծախսատար չէ: Այնուամենայնիվ, առկա են հագուստի տներ, որոնք բեկում են մտցրել այս գործընթացում[9]:

Որոշ նորաձևության ապրանքանիշներ էլ, ներառական հագուստ սպառողների խմբին համարելով որպես վաճառքի ընդլայնման հնարավորություն, թիրախավորվում են վերջիններիս ուղղությամբ: Առաջին ապրանքանիշը, որ սկսել է զբաղվել ներառական հագուստի արտադրությամբ, «Tommy Hilfiger»-ն է, որը նախ (2016 թվականին)՝ համապատասխան հագուստ սկսել է թողարկել երեխաների, այնուհետև (2017 թվականին) մեծահասակների համար: Թողարկումը ներկայացվել է որպես «բոլորի համար նախատեսված հավաքածու, որն օժտված է նորարարական հատկանիշներով՝ հագնվելն ավելի հեշտ դարձնելու համար, քան երբևէ»[10]:

Հանդես գալով նման նախաձեռնությամբ՝ ապրանքանիշները, նախ և առաջ, լուծում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խնդիրներ, որոնց

[7] «Эти вещи были придуманы для людей с инвалидностью. Теперь ими пользуются все Что такое инклюзивный дизайн - и кто им занимается в России», 30 ноября 2019, Meduza, https://meduza.io/feature/2019/11/30/eti-veschi-byli-priduma-ny-dlya-lyudey-s-invalidnostyu-teper-imi-polzuyutsya-vse

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում:

[10] Навстречу людям, нуждающимся в комфорте, Дарья Зайцева, 24.02.2020г., https://heroine.ru/moda-dlya-vseh-kak-diza-jnery-pereshli-k-inklyuzivnosti/

էությունը ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ ձևավորված և հարմարավետ հագուստով ու կոշիկներով հանդերձավորելն է, այլև թույլ տալ զգալ նույնը, ինչ բոլորը՝ հագնվելով բոլորի հետ միասին:

Աշխարհում այժմ փորձ է արվում զարգացնելու ներառական հագուստի արտադրության տարբեր ուղղություններ, ինչպես, օրինակ, հատուկ գործվածքից հագուստ մաշկի ծանր հիվանդություններ ունեցողների, համազգեստ՝ ներառական մարզական թիմի, գիշերազգեստ՝ քնի խանգարումներով և հատուկ վախերով տառապողների համար[11]:

Միաժամանակ, կան ապրանքանիշներ, որոնց գործունեությունն ուղղված է միայն ներառական հագուստի արտադրությանը; Օրինակ՝ «FFORA»-ն, որը ստեղծվել է անվասայլակից օգտվողների հագուստի և աքսեսուարների դիզայներ Լյուսի Ջոնսի՝ կողմից[12]:

Այս կերպ ապրանքանիշները հանգում են ամենակարևորին՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց շուրջ միջավայր և փոխըմբռնում ստեղծելուն: Սա այնպիսի երևույթ է նորաձևության մեջ, երբ հագուստը և աքսեսուարները դառնում են հաղորդակցության ուղիներ և արտահայտում իրենց կրողների սոցիալական տեսակետները, արժեքներն ու գաղափարները[13]:

Ի վերջո, խոսքը միայն հագուստ ստեղծելու մասին չէ, այլ բազմաթիվ գործոնների՝ նախապատմություն, ապրելակերպ, կարիքների բացահայտում:

Նման գործունեություն իրականացնելու համար ապրանքանիշների մեծ մասին սկզբնական շրջանում անհրաժեշտ է կամ պետական հոգածություն, կամ ֆինանսավորման այլ աղբյուրներ, քանի որ առևտրայնացումն այստեղ շատ բարդ է:

Օրինակ՝ երբ ընկերությունը նկարահանվելու համար հրավիրում է անդամահատված կամ անվասայլակով մոդելի, սա արդեն իսկ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վառ դրսևորում է: Նախ՝ այս կերպ ստեղծվում է հավելյալ աշխատատեղ սահմանափակ կարողություններով մարդկանց համար, որոնց դեպքում աշխատատեղերը միշտ էլ սուղ են:

Ավելին, երբ հագուստը գովազդվում է այն մարդկանց կողմից, որոնց համար դա ստեղծվել է, ընդգծվում են նաև դրա նպատակայնությունը, հարմարավետությունը: Եթե ներառական հագուստի արտադրությունը դիտարկենք շահութաբերության տեսանկյունից, ապա այն չի կարող ապահովել գերշահույթ, քանի որ չունի գերսպառում:

Մեկ այլ օրինակ է «Chromat»-ը, որի ցուցադրություններին, որպես մոդել, հանդես են գալիս անդամալույծները և նույնիսկ դաունի համախտանիշով անձինք: Տասնամյակներ էին հարկավոր հասկանալու համար, որ կատարյալ կազմվածքով կինը չի ներկայացնում բոլոր գնորդ-

[11] Инклюзивная мода – что такое и для кого? https://planeta.ru/campaigns/yokla

[12] «Эти вещи были придуманы для людей с инвалидностью. Теперь ими пользуются все Что такое инклюзивный дизайн — и кто им занимается в России», 30 ноября 2019, Meduza, https://meduza.io/feature/2019/11/30/eti-veschi-byli-pridumany-dlya-lyudey-s-invalidnostyu-teper-imi-polzuyutsya-vse

[13] Инклюзивная мода – что такое и для кого?, https://vanilla.su/inklyuzivnaya-moda-chto-takoe-i-dlya-kogo.html

[14] «Эти вещи были придуманы для людей с инвалидностью. Теперь ими пользуются все Что такое инклюзивный дизайн — и кто им занимается в России», 30 ноября 2019, Meduza, https://meduza.io/feature/2019/11/30/eti-veschi-byli-pridumany-dlya-lyudey-s-invalidnostyu-teper-imi-polzuyutsya-vse

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Հաշվառված հաշմանդամների թիվն ըստ հաշմանդամության պատճառների և հաշմանդամության խմբերի[15]

	2019			2020			2021		
	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	1-ին խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ
Ընդհանուր հիվանդություններ	5 865	52 639	89 174	5 628	51307	90580	5468	50633	93532
Մանկուց հիվանդություն	3 324	10 470	9 841	3 287	10424	10073	3296	10397	10321
Զինծառայության հետ կապված, *այդ թվում՝*	536	4 610	4 028	529	4 469	4 024	611	4 715	4 906
ՀՀ սահմանները պաշտպանելիս	183	1 623	2 144	179	1 908	1 121	172	1861	1103
Զինծառայության ընթացքում	227	1 956	1 147	231	1 585	2 166	223	1569	2 264
Զինվորական պարտականությունները կատարելիս	96	857	722	96	833	721	93	817	715
Հակառակորդի հետ շփման գծում, մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ	-	-	-	-	-	-	107	360	816
Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ ստացած հիվանդություն, խեղում, վնասվածք	30	174	15	23	143	16	16	108	8
Աշխատանքային խեղում	99	556	1 045	91	500	982	81	475	917
Մասնագիտական հիվանդություն	4	88	105	3	84	99	3	80	80
Չերնոբիլի ԱԷԿ-ի վթարի վերացման հետ կապված	7	307	230	6	295	225	5	282	217
Տարերային, տեխնածին և այլ աղետների, ինչպես նաև դրանց վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդություն, խեղում, վնասվածք	47	309	106	48	293	109	47	280	104
Ընդամենը	***9 882***	***68979***	***104529***	***9592***	***67372***	***106092***	***9511***	***66862***	***110079***

ներին[14]:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 2021 թվականի վերջին Հայաստանում գրանցված է 195634 հաշմանդամություն ունեցող անձ: Ակնհայտ է, որ այդ կատեգորիան ոչ միայն հարմարավետ, ֆունկցիոնալ, այլև գեղեցիկ, ոճային հագուստի կարիք ունի[16]:

Ուսումնասիրելով Հայաստանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց քանակն ըստ հաշմանդամության պատճառների և խմբերի՝ ՀՀ վերջին տարիների վիճակագրությունից տեսանելի է, որ այստեղ նույնիսկ ավելացել է հաշմանդամության առաջացման պատճառի նոր դասակարգում՝ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ առաջացած հաշմանդամություն: Այս պատճառով հաշմանդամ դարձածների թիվը 2021 թ. տարեվերջին կազմել է 1283 (3 խմբերը միասին (աղյուսակ 1)): Սրանք հիմնականում անդամալույծ, բազմապիսի լուրջ այրվածքների հետևանքով մաշկային գերզգայունություն ունեցող անձինք են[17]:

Պատճառներն այնպիսին են, որոնց վերականգնողական միջոցառումների անքակտելի մասը պետք է կազմի ներառական հագուստը:

Հայաստանում ներառական հագուստի արտադրության զարգացումը ստեղծված իրավիճակում, երբ հաշմանդամությունը հայտնի պատճառներով էլ ավելի է ընդլայնվել, ժամանակի հրամայականն է: Հասկանալու համար, թե որքանով է խնդիրը կարևոր, անցկացրել ենք հարցում ընտրանքային թիրախային խմբի

[15] Աղյուսակի կազմման հիմքում՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ., 2021թ., 2022 թ. հունվարին, https://www.armstat.am/am/?nid=82&id=2464, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_530.pdf; https://www.armstat.am/am/?nid=82&id=2241

[16] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվարին, https://www.armstat.am/am/?nid=82&id=2464

[17] Նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հաշմանդամության հետևանքով ինչ խնդիրներ ունեք

շրջանում: Հարցմանը մասնակցել է 100 մարդ, այդ թվում՝ «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում բուժվող, հայրենիքի պաշպանության համար վիրավորված կամ առողջական խնդիրներ ունեցող անձինք, մեծամասնությունը՝ անդամալույծ, հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող (գծապատկեր 1):

Հարցման ժամանակ պարզ դարձավ, որ, պայմանավորված հաշմանդամության տեսակներով, ներառական հագուստի կիրառումը կունենա մեծ ազդեցություն և կբարձրացնի վերականգնողական միջոցառումների արդյունավետության մակարդակը, ինչպես նաև կբարելավի կյանքի որակը (գծապատկեր 2 և 3):

Հարցվողների մեծ մասը, լինելով 18-25 տարեկան երիտասարդներ, ինչպես և ակնկալվում էր, ամեն առումով ձգտում էր վերականգնել մինչև հաշմանդամությունն ունեցած բնականոն կյանքը, որի կարևոր տարրերից է հագուստը: Նրանք նշում էին, որ սովորական հագուստի փոխակերպումը ներառականի լի է խնդիրներով և անհարմարություններով ու կապված է ձևափոխման հավելյալ ծախսերի հետ: Այսինքն՝ ֆունկցիոնալ հագուստն ըստ կարևորության կարելի է դիտարկել որպես վերականգնողական միջոցառման կարևորագույն բաղադրիչ:

Բոլոր հարցվողները վկայում էին, որ Հայաստանում շատ բարդ է ներառական հագուստ գտնելը, քանի որ դրա քանակը սահմանափակ է կամ գրեթե չի ներկրվում:

Նրանք ողջունում և մեծ ոգևորությամբ էին արձագանքում հայկական համանման արտադրության զարգացման գաղափարին, որը կթեթևացնի առաջացած անհարմարությունները և կլուծի սոցիալականացման խնդիրը (գծապատկեր 4):

Ներառական հագուստը կարող է անդրադառնալ վերականգնողական միջոցառումների վրա



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ներառական հագուստը կազդի Ձեր կյանքի որակի վրա



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ցանկանում եք, որ ՀՀ-ում զարգանա ներառական հագուստի արտադրությունը

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ներառական հագուստի արտադրության զարգացումը դիտարկում եք որպես սահմանափակ կարողություններով մարդկանց համար նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Հարցվողների մեծ մասը ճյուղի զարգացումը դիտարկում էր նաև որպես սահմանափակ կարողություններով մարդկանց համար հավելյալ աշխատատեղերի ստեղծման նոր հնարավորություն (գծապատկեր 5):

Ներառական հագուստի շուկայի զարգացման գործում հիմնական խոչընդոտը թիրախային սպառողների ցածր եկամուտներն են: Վերջիններս շատ դեպքերում գործազուրկ են կամ ունեն չափազանց քիչ եկամուտ: Այդ է պատճառը, որ մինչ այժմ զարգացած է նորածինների, հղիների, գեր և ավելորդ քաշ ունեցողների համար նախատեսված հագուստի արտադրությունը, մինչդեռ ներառական հագուստի ոլորտը թերի վիճակում է:

Այս առումով, մեծ օգնություն կլինի, եթե ներառական հագուստն ընդգրկված լինի պետական անհատական վերականգնողական ծրագրերում: Հայաստանում նախ՝ պետք է թեկուզ և պետական աջակցությամբ զարգացնել ներառական հագուստի արտադրությունը, այնուհետև առևտրային կազմակերպություններին ներգրավվել նման ծրագրերում:

Պետության կողմից նման արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների սուբսիդավորումը կարող է լուրջ խթան դառնալ՝ փոխելու վերջիններիս գործունեության ուղղվածությունը: Պետական սուբսիդավորմամբ արտադրված հագուստը հնարավոր կլինի մատչելի գներով վաճառել հաշմանդամ սպառողներին, իսկ մասնագիտացմանը զուգընթաց, երբ կընդլայնվեն արտադրության ծավալներն ու ձեռք կբերվի արտահանման ներուժ, արդեն իսկ կարելի կլինի այդ ապրանքը վաճառել ավելի շահութաբեր գնով:

Ճյուղը զարգացնելու համար, նախ և առաջ, պետք է մշակել կրթական մոդել և ուսուցանել համապատասխան դիզայներների: Ավելի արդյունավետ կլինի, եթե պետությունն ինքը կազմակերպի անվճար դասընթացներ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, որոնք ցանկանում են դառնալ ներառական հագուստի մոդելավորողներ կամ աշխատել այս ոլորտում: Նշված գործընթացում հաշմանդամների ներգրավումը միանգամից կլուծի երեք խնդիր: Նախ՝ նման մարդիկ առավել լավ են հասկանում ոլորտի խնդիրները և առանձնահատկությունները՝ ելնելով սեփական փորձից, կրած անհարմարություններից: Այս կերպ վերջիններիս համար կստեղծվեն հավելյալ աշխատատեղեր, ինչը մշտական խնդրո առարկա է: Եվ ամենակարևորը, կարտադրվի ներառական հագուստ, որը թույլ կտա սահմանափակ կարողություններով մարդկանց իրենց զգալ հասարակության լիարժեք անդամ:

Հայաստանում ներառական հագուստի արտադրության զարգացման կարևոր ուղի կարող է դառնալ նաև քրաուդֆանդինգը՝ մի հարթակ, որտեղ մարդիկ կամավոր ներդրումներ են կատարում նոր նախագծերի մշակման, տուժածներին օգնելու, աջակցելու համար: Վերջինիս միտվածությունը լիովին համապատասխանում է վերոնշյալ նպատակին:

Հագուստի արտադրությամբ զբաղվող

ձեռնարկատերերի համար քրաուդֆանդինգն այս նոր բիզնեսի հիմնադրման նպատակով կապիտալ ձեռք բերելու հիանալի միջոց է, իսկ ներդրողների համար հնարավորություն՝ խոստումնալից նախագծեր կյանքի կոչելու առումով:

Քրաուդֆանդինգի հիմքում մարդկանց ու միջավայրին օգտակար լինելու գաղափարն է: Այս առումով, ներառական հագուստի արտադրությունն ամբողջապես համապատասխանում է նշված գաղափարին: Կան քրաուդֆանդինգի հայտնի հարթակներ, որոնց օգնությանը կարելի է դիմել (Indiegogo, Crowdfunder, Kickstarter)[18]:

Հետպատերազմյան շրջանում, ՀՀ-ում հաշմանդամության կտրուկ աճին զուգընթաց, ներառական հագուստի արտադրության զարգացումը՝ պետական աջակցության ներքո, նման անձանց նկատմամբ հոգածության կարևոր դրսևորում կլինի:

Այս ոլորտը զարգացնելու համար, առաջին հերթին, կարևորվում է հաշմանդամների համայնքի հետ սերտ համագործակցության ապահովումը՝ պարզելու հիմնական շահառուների տեսլականն այս առնչությամբ, այնուհետև համապատասխան ռազմավարության մշակումն ու դրա փուլ առ փուլ իրագործումը:

[18] «Ինչ է քրաուդֆանդինգը: Crowdfunding հարթակներ աշխարհում և Ռուսաստանում. տարբեր հարթակների համեմատություն», https://sato-1.ru/hy/detskie-ortopedy/chto-takoe-kraudfanding-kraudfandingovye-ploshchadki-v-mire-i/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ինչ է քրաուդֆանդինգը: Crowdfunding հարթակներ աշխարհում և Ռուսաստանում. տարբեր հարթակների համեմատություն», https://sato-1.ru/hy/detskie-ortopedy/chto-takoe-kraudfanding-kraudfandingovye-ploshchadki-v-mire-i/
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվարին, https://www.armstat.am/am/?nid=82&id=2464
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվարին, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_530.pdf
4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվարին, https://www.armstat.am/am/?nid=82&id=2241
5. «Почему мода должна быть инклюзивной?», 29.04.2022, Глеб Голицын, https://foxtime.ru/pochemu-moda-dolzhna-byt-inkljuzivnoj/
6. «Эти вещи были придуманы для людей с инвалидностью. Теперь ими пользуются все Что такое инклюзивный дизайн — и кто им занимается в России», 30 ноября 2019, Источник: Meduza, https://meduza.io/feature/2019/11/30/eti-veschi-byli-pridumany-dlya-lyudey-s-invalidnostyu-teper-imi-polzuyutsya-vse
7. «Почему мода должна быть инклюзивной?», 29.04.2022, Глеб Голицын, https://foxtime.ru/pochemu-moda-dolzhna-byt-inkljuzivnoj/
8. Инклюзивная мода – что такое и для кого?, https://vanilla.su/inklyuzivnaya-moda-chto-takoe-i-dlya-kogo.html
9. Навстречу людям, нуждающимся в комфорте, Дарья Зайцева ,24.02.2020г., https://heroine.ru/moda-dlya-vseh-kak-dizajnery-pereshli-k-inklyuzivnosti/
10. «Мода для всех: как дизайнеры перешли к инклюзивности», Дарья Зайцева, 24.02.2020 г., https://heroine.ru/moda-dlya-vseh-kak-dizajnery-pereshli-k-inklyuzivnosti/
11. «Основы инклюзивного дизайна текстильных средств реабилитации для детей», диссертациа, Голубчикова Анастасия Валентиновна, 2021, https://www.dissercat.com/content/osnovy-inklyuzivnogo-dizaina-tekstilnykh-sredstv-reabilitatsii-dlya-detei
12. Инклюзивная мода — оксюморон или один из путей к устойчивому развитию?, https://www.nlobooks.ru/magazines/teoriya_mody/53_tm_3_2019/article/21630/
13. 4 reasons inclusive fashion matters for everyone, Jun. 2020, https://www.canvasandweaves.com/blogs/writing-stories/why-inclusivity-in-fashion-matters
14. Embracing Inclusive Fashion: Tapping into Latent Opportunities for Growth, https://vue.ai/blog/leaders-in-retail/embracing-inclusive-fashion-tapping-into-latent-opportunities-for-growth/

15. Inclusivity in the Fashion World and How It Impacts Consumer Behavior, https://www.popneuro.com/neuromarketing-blog/consumer-behavior-psychology-fashion-diversity-advertisements-inclusivity-disability
16. The importance of having a more inclusive fashion industry, By Thomasina R. Legend, Oct 5, 2021, https://www.ciafe.org/post/the-importance-of-having-a-more-inclusive-fashion-industry
17. Inclusive Fashion – The New Frontier to Sustainable Fashion, https://thesustainablemag.com/lifestyle/inclusive-fashion-the-new-frontier-to-sustainable-fashion/
18. The Importance of Inclusivity in Your Fashion Company, https://440industries.com/the-importance-of-inclusivity-in-your-fashion-company/
19. Top 3 Benefits of Inclusive Fashion, https://lisacox.co/2020/01/top-3-benefits-of-inclusive-fashion/
20. Fashion Designing in an Inclusive World, ICONIC GARMENTS FOR PEOPLE WITH REDUCED MOBILITY, https://worthproject.eu/project/fashion-designing-for-an-inclusive-world/

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

МОДА РАВНЫХ: МОДА ДЛЯ ВСЕХ, А НЕ ДЛЯ ИЗБРАННЫХ

Одежда оказывает большое психологическое воздействие, придает уверенности в себе, решает задачу социализации. Равенство и толерантность – одни из основных направлений современной моды. Смысл инклюзивной одежды в том, чтобы люди с ограниченными возможностями чувствовали себя как все. Инклюзивная одежда сама по себе является составной частью реабилитационных мероприятий. Создание инклюзивной одежды с универсальным дизайном — серьезная задача для современного человека. Помимо государства, для развития производства инклюзивной одежды в Армении можно использовать краудфандинговые платформы. Сейчас самое время развивать моду для тех, о которых принято молчать. Производство инклюзивной одежды – это прежде всего гуманитарная деятельность. Это способ помочь, облегчить жизнь тем, кто нуждается в помощи.

Ключевые слова: *инклюзивная одежда, краудфандинг, импакт бизнес, инвалидность, ограниченные способности, корпоративная социальная ответственность, социальная мода*

Tereza SHAHRIMANYAN
Administrator of the Amberd Research Center, ASUE

MARKETS AND COMPETITION

EQUALITY FASHION: FASHION FOR EVERYONE, NOT FOR THE CHOSEN ONES

Clothing has a great psychological effect, it gives self-confidence, solves the problem of socialization. Equality and tolerance is one of the main directions of modern fashion. The point of inclusive clothing is to make people with disabilities feel like everyone else. Inclusive clothing itself is a component of rehabilitation measures. Creating inclusive clothing with a universal design is a major challenge for modern people. In addition to the state, crowdfunding platforms can be used for the development of the production of inclusive clothes in Armenia. Now it is time to develop a fashion for those for whom it is customary to remain silent. The production of inclusive clothing is firstly and foremost a humanitarian activity. It is a way to help, to make life easier for those who need help.

Keywords: *inclusive clothing, crowdfunding, impact business, disability, limited capacity, corporate social responsibility, social fashion*